

## ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱԾԱՊԱՏՈՒՄ ՀԷՔԵԱԹՆԵՐԻ

Ինչպէս նախընթաց յօդուածներում ցոյց էր տրուել<sup>1</sup>, Հայկական հրաշապատում հէքեաթներն ու Սասնայ Ծռեր դիցավէպը պարունակում են բաւական հարուստ տեղեկութիւններ, որոնց վերլուծութեամբ հնարաւոր է եղել ընդհանուր գծերով վերականգնել դրանց ստեղծման ժամանակների օրացուցային պատկերացումները: Ստացուել էր իւրայատուկ կառուցուածքով մի օրացոյց, որ իր սկզբունքային յատկանիշներով լիովին համահունչ էր Նախահայկեան օրացոյցին<sup>2</sup>: Յընթացս այդ աշխատանքի ստացուել էին նաեւ հետաքրքիր տուեալներ խնդրոյ առարկայ օրացոյցներին ժայմանակակից տարածական պատկերացումների

- 1 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Որոշ օրացուցային իրողութիւններ հայկական հրաշապատում հէքեաթներում. Ա., Բ., Գ., ի էջմիածին, 2008, Բ., 49-70, 2009, ժԲ., 62-83, 2010, Զ, 22-44:
- 2 Նախահայկեան օրացոյցը սկզբնապէս վերականգնուել էր հայկական միջնադարեան օրացոյցների պարունակած տեղեկոյթի եւ այդ օրացոյցներին վերաբերող կողմնակի յաւելեալ տեղեկոյթի վերլուծութեան հիման վրայ: Այդ վերականգնումից յետոյ ստացուած պատկերը համեմատուել էր այլ աղբիւրներից յայտնի օրացուցային տեղեկոյթի հետ: Ստացուել էր շատ լաւ համապատասխանութիւն. ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայոց հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ագաթանգեղոսի «Հայոց Պատմութեան», ի էջմիածին, 1998, Զ., 45-53, նաեւ Նոյն, Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները եւ Վասիլ Դիգեմիս Ակրիտասի մասին քիւզանդական դիցավէպը, ի Բազմավէպ, 2004, 5-16: Աւելի ուշ Նախահայկեան օրացոյցի կառուցուածքը հաստատուել էր նաեւ Գ.Ք. 32-30րդ դարի հնագիտական գտածոյի՝ Քեթիից (Շիրակ) գտնուած քրեդանի զարդապատկերների վերլուծութեամբ ստացուած օրացոյցով, տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Գ.Ք. 28-27րդ դարի քրեդանի զարդապատկերի վերլուծութեան, ի Բազմավէպ, 2007, 149-163:

մասին: Ի մասնաւորի ստացուել էր, որ քննարկուած հէքեաթնե-  
րի մէջ առկայ է ինչպէս ժամանակի, այնպէս էլ աշխարհի եռա-  
մաս կառուցուածքի պատկերացումը:

Փաստօրէն, մեր հէքեաթների եւ դիցավէպի նիւթը մեզ  
հնարաւորութիւն է տալիս ընդհանուր գծերով վերականգնել  
Հայոց հնագոյն պատկերացումները թէ՛ տարածութեան (աշխար-  
հի), եւ թէ՛ ժամանակի (տարեշրջանի) կառուցուածքի մասին:

Ելնելով նշեալ յօդուածաշարում դրուած խնդիրներից եւ  
յօդուածների սահմանափակ ծաւալի թելադրանքից, սակայն,  
դրանց մէջ նպատակ է եղել միայն վերականգնել հնագոյն օրա-  
ցուցային պատկերացումները, զանց են առնուել թէ՛ տարա-  
ծութեան (աշխարհի), եւ թէ՛ ժամանակի մասին ընդհանուր  
պատկերացումները, չի կատարուել դրանց յատուկ քննութիւն:  
Միեւնոյն ժամանակ, առկայ նիւթը թոյլ է տալիս գոնէ ընդհա-  
նուր գծերով քննել եւ փորձել վերականգնել տարածութեան եւ  
ժամանակի մասին Հայոց հնագոյն պատկերացումների համա-  
կարգը, որ ինքնին առանձին կարեւորութիւն ունի: Այսու,  
ստորեւ կը փորձենք մեզ մատչելի նիւթից դուրս կորզել այն  
ամենաէականը, ինչ վերաբերում է Հայոց հնագոյն տարածա-ժա-  
մանակային պատկերացումների համակարգին եւ այդ հիման  
վրայ գոնէ ընդհանուր գծերով վերականգնել այդ համակարգը:

Նախ «գոյֆագրեմֆ» այն ամէնը, ինչ ստացել ենք նախորդ  
հետազօտութիւններով:

Ունենք, որ աշխարհը ընկալուել է եռամաս՝ Անդունդֆ  
(կամ Ստորերկրայք, կամ Մուլթ աշխարհ, ուր բացարձակ մուլթ  
է), Կախարդական աշխարհ (որ գետնի տակ է եւ մուլթ աշխարհ  
է, սակայն բացարձակ մուլթ չէ) եւ Լոյս աշխարհ (սովորական  
աշխարհը, ուր անցնում է մարդկանց կեանքը, առօրեան): Սրան  
գուգահեռ է եղել նաեւ ժամանակի ընկալումը: Ժամանակը եւս  
ընկալուել է եռամաս: Տարեշրջանը, որ ժամանակի հիմնական  
պարբերութիւնն է, հիմնական միաւորը, ամբողջութիւնը, ընկա-  
լուել է տրոհուած երեք մասի: Եղել է Լոյս աշխարհին գուգա-  
հեռ տարեմաս (երեք ամիս), ապա՝ Կախարդական աշխարհին  
գուգահեռ տարեմաս (վեց ամիս եւ մէկ ամիս եւս՝ մնացեալ վե-  
ցից ինչ-որ բանով տարբեր) եւ ի վերջոյ՝ Մուլթ աշխարհին  
(Անդունդքին) գուգահեռ տարեմաս (չուրջ երկու ամիս տեւողու-  
թեամբ), որն էլ եղել է բուն տարուց դուրս համարուած՝ արտա-

*տարեկան ժամանակաշրջան: Ստորեւ աղիւսակի տեսքով ներկայացնենք տարածութեան եւ ժամանակի այս կառուցուածքը:*

Լոյս Աշխարհ	Տարածութիւնը	Ժամանակը	տարեշրջանի առաջին երեք ամիսները
Կախարդական (Քաջանց) Աշխարհ			տարեշրջանի յաջորդ վեց ամիսները եւ եւս մէկ այլ ամիս
Մուկ (Սև) Աշխարհ (Անդունդք)			Արտատարեկան օրեր (շուրջ երկու ամիս)

*Աշխարհների եւ ժամանակի մասերի այս համապատասխանութիւնը յստակ ներկայացուած է հէքեաթներում: Հէքեաթների գործողութիւնները սկսում են Լոյս Աշխարհում եւ սկզբի գործող անձինք էլ երեք եղբայրներն են: Ապա գործողութիւնները տեղափոխւում են Կախարդական Աշխարհ (հորի միջով, կամ այլ կերպ) եւ այստեղ էլ գործող անձերը երեք աղջիկները (քոյրերն) են ու նրանց ամուսին երեք դուստրը (որ եղբայրներ են): Ի վերջոյ գործողութիւնները տեղափոխւում են Մուկ Աշխարհ, Անդունդք, ուր բացարձակ մութ է եւ հիմնական գործող անձինք էլ երեք վիշապներն են<sup>3</sup>: Անդունդքից հերոսը ուղղակիօրէն (առանց իր եկած ուղին ետ անցնելու) գալիս է վերստին Լոյս աշխարհ: Եւ այս ուղղակի վերադարձի պատճառն այն է, որ իր եկածի (այսինքն՝ իր շարժման) հակառակ ուղղութեամբ շարժումը, ըստ հէքեաթների, անհնար է:*

*Այսքանից, արդէն, կարելի է անել մի քանի հետեւութիւն:*

*Առաջին. աշխարհների միջով միայն մէկ ուղղութեամբ իրականացուող այս շարժումը յստակ արտայայտութիւնն է այն իրո-*

3 Խօսքը վերաբերում է տուեալ տեղի հիմնական գործող անձերին, իսկ հէքեաթի հերոսը՝ տղան գործում է ինչպէս ի՛ր բնիկ Լոյս աշխարհում, այնպէս էլ միւս երկու աշխարհներում: Տարբերութիւնն այն է, որ, եթէ տեղի հիմնական գործող «անձինք» տեղում մշտապէս առկայ իրավիճակը ստեղծողներն ու պահպանողներն են, ապա հերոսը՝ տղան այդ իրավիճակները փոփոխողն է: Նա, դուրս գալով իր աշխարհից, մտնում է այլ աշխարհներ եւ էական սկզբունքային փոփոխութիւններ է կատարում այդ աշխարհներում: Սրանով նա ոչ թէ այդ աշխարհների գործող անձ է սովորական իմաստով, այլ այդ աշխարհների յեղափոխող, յեղաշրջող:

ղուծեան, որ սա «Ժամանակային» շարժում է, այսինքն՝ սա շարժում է «Ժամանակի ընթացքով», քանի որ մարդու ընկալած իրողութիւններից միայն ժամանակն է, որ ընկալւում է այդպիսի «միակողմանի» շարժման հնարաւորութեամբ:

**Երկրորդ.** աշխարհների այս յաջորդական շարքի վերջից մի անգամից դրա սկզբին անցնելը հէնց պարբերական իրադարձութեան վկայութիւնն է եւ վկայութիւն է առ այն, որ այսպիսի կառուցուածքը զուգահեռ է հիմնական պարբերական իրադարձութեանը, որ հէնց տարեշրջանն է:

Տարածութեան տարբեր մասերին՝ տարբեր աշխարհներին զուգահեռ ժամանակի այսպիսի բաժանման մէջ բուն տարի է համարուել Լոյս աշխարհին եւ Կախարդական աշխարհին ձօնուած տարեմասերի ամբողջութիւնը, որ եղել է շուրջ տասն ամիս: Մնացեալ՝ շուրջ երկամսեայ ժամանակահատուածը համարուել է տարուց դուրս:

Քանի որ օրացոյցի այսպիսի կառուցուածքը սկզբունքօրէն համընկնում է Նախահայկեան օրացոյցի կառուցուածքին, ապա բնական է համեմատել նաեւ դրանց ներքին՝ մանրամասն կառուցուածքները: Անշուշտ, Նախահայկեան օրացոյցի ներքին կառուցուածքը մանրամասնօրէն մեզ տակաւին յայտնի չէ, սակայն որոշ սկզբունքային մանրամասներ այդուհանդերձ յայտնի են: Հէնց դրանց հետ էլ կատարենք մեր համեմատութիւնը:

**Այսպէս.** գիտենք, որ Նախահայկեան օրացոյցում բուն տարին բաղկացած է միայն տասն ամիսներից: Այս տասն ամիսներից առաջին երեքը ձօնուած են Հայկի (Հայր աստուծոյ) երեք որդիներին, իսկ յաջորդ եօթը ձօնուած են նոյն պաշտուող էակի եօթ դուստրերին: Տասնամսեայ տարուց յետոյ կայ շուրջ երկամսեայ արտատարեկան օրերի ժամանակաշրջան՝ ձօնուած Անդրաշխարհի պաշտամունքին, որ, սակայն, տրոհուած չէ ամիսների: Այս արտատարեկան օրերից յետոյ Ամանորի տօնով սկսւում է նոր տարին: Այսինքն, արտատարեկան օրերը իրենց վերջի մասով կից են տարուայ սկզբի մասին:

Արդ, եթէ տարուայ սկիզբը զուգահեռ դնենք Լոյս աշխարհին, ուր հիմնական գործող անձինք մեր հէքեաթների հերոս տղան եւ իր երկու եղբայրներն են (Թագաւորի երեք որդիները), ապա, բնականաբար, տարուայ յաջորդ հատուածը պիտի զուգա-

հեռ լինի Կախարդական աշխարհին, եւ համապատասխանի Հայկի (Թագաւորի) եօթ (կամ երեք) դուստրերին-քոյրերին:

Այսինքն, տարուայ առաջին երեք ամիսները պիտի համապատասխանեն Հայկի (Թագաւորի) երեք որդիներին (երեք արական կերպարներին) եւ Լոյս աշխարհին: Տարուայ յաջորդ եօթն ամիսները պիտի համապատասխանեն Հայկի (Թագաւորի) եօթ դուստրերին (կամ Թագաւորի երեք դուստրերին եւ նրանց ամուսին երեք դեւերին<sup>4</sup> - եօթ իգական կերպարներին) եւ Կախարդական աշխարհին: Բուն տարուայ աւարտից յետոյ տարեշրջանում մնում է արտատարեկան ժամանակամիջոցը (չուրջ երկու ամիս): Այս արտատարեկան ժամանակն էլ պիտի համապատասխանի Մութ աշխարհին եւ այնտեղ գործող երեք վիշապներին: Ընդ որում, այս երեք վիշապներից մէկը միաժամանակ թէ՛ Մութ աշխարհում է, եւ թէ՛ Կախարդական աշխարհում<sup>5</sup>: Այս վիշապը Կախարդական աշխարհում դրսեւորուած է իբրեւ եօթներորդ միւսներից տարբեր «խորթ» քոյր: Այս կերպ կ'ունենանք եռամաս աշխարհի եւ եռամաս ժամանակի հատուածների հետեւեալ համապատասխանութիւնը:

4 Այստեղ կարող է թուալ, թէ անհամապատասխանութիւն կայ թուերի մէջ: Թագաւորի երեք դուստրերն ու նրանց ամուսին երեք դուստրերը միասին լինում են վեց կերպար, այնինչ, միւս կողմից ունենմ Հայկի եօթ դուստրերը: Այս անհամապատասխանութիւնը միայն թուացեալ է: Բանն այն է, որ, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Հայկի եօթ դուստրերը (հեքեաթների եօթ խորերը) բաժանուում են երեք մասի  $3+3+1=7$  սկզբունքով: Եւ այս եօթի մէջ վերջին՝ փոքր խորը էապէս տարբերում է միւս վեցից: Այնպէս որ, այս մէկ՝ միւսներից տարբեր աղջկան առանձնացնելով, կ'ունենանք աղջիկների խմբում վեց աղջիկ, որոհուած  $3+3=6$  սկզբունքով: Եւ սա էլ ներդաշնակ է երեք աղջիկներ - երեք դուստր խմբին: Իսկ եօթներորդ խորը (որ նայնն է, ինչ՝ թագաւորի երրորդ դուստրը) էապէս տարբեր է միւս խորերից եւ նա հանդէս է գալիս երկու տարբեր աշխարհներում՝ թէ Կախարդական, եւ թէ՛ Մութ աշխարհներում:

5 Սա գուգահեռ է խորերից մէկի՝ երկու աշխարհներում հանդէս գալուն տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը: Սրան գուգահեռ է Սասնայ Ծոճերում Դեղձունի եւ իր քրոջ հանդէս գալը Կախարդական (Քաջանց) աշխարհում եւ Օձ ֆաղափում, որ վիշապների աշխարհն է:

	Աշխարհի մասերը	Աշխարհի մասերի կառուցումաձևը	Ժամանակի մասերը	Տևողութիւնը		
Աշխարհ	Հոյս աշխարհ	երեք եղբայրների (Հօր) թագաւորութիւնը	տղաներին (երեք եղբայրներին) ձօնուած տարեմաս	3 ամիս	Տարի (300 օր = 10 ամիս)	Տարեշրջան (300 օր + արտատարեկան շրջան, 60 - 70 օր)
	Կախարդական աշխարհ	երեք դեւերի աշխարհներ	աղջիկներին (եօթ քոյրերին) ձօնուած տարեմաս	6 + 1 ամիս		
	Անդունդք, Մութ աշխարհ	երեք վիշապների ուլորտներ	Արտատարեկան ժամանակ	շուրջ 2 ամիս (60 - 70 օր)	Արտատարեկան օրեր	

Նայելով աղիւսակին, տեսնում ենք, որ տարեշրջանը նախ՝ «արտաբնապէս» տրոհուած է երկու հակադիր մասերի՝ բուն տարի եւ արտատարեկան մաս: Սակայն իրականում սա ոչ թէ երկմաս, այլ եռամաս տրոհում է: Բանն այն է, որ արտատարեկան ժամանակահատուածը ինքը երկու մասից է բաղկացած: Դրա մի մասը կից է տարուայ սկզբին, միւս մասը կից է տարուայ վերջին:

Այսինքն, ա՛յս կերպ կ'ունենանք

ա. տարեմուտին նախորդող արտատարեկան օրեր,

բ. բուն տարի,

գ. տարեվերջին յաջորդող արտատարեկան օրեր: (Տե՛ս աղիւսակը ստորեւ)<sup>6</sup>:

Տ	Ա	Ր	Ե	Շ	Ր	Ջ	Ա	Ն
տարուց դուրս		Տ	Ա	Ր	Ի	տարուց դուրս		
փոքր վիշապ		թռչում			վիշապ		մեծ շեղանկիւն	
գարուն		ամառ			աշուն ձմեռ		գարուն	

6 Այս աղիւսակի մասին մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Գ. 28-27-րդ դարի Էրեղանի գարդապատկերների վերլուծութեան, Ի Բազմավէպ, 2007, թիւ 1-12, 149-163, 162:

Այսինքն, արդէն իսկ այստեղ ունենք ժամանակի եռամաս տրոհում: Սակայն յաջորդ աստիճանում այս եռամաս տրոհման մասերը իրենք եւս տրոհուում են երեքական մասերի: Բուն տարին ինքը տրոհուած է երկու մասերի՝ արական եւ իգական կերպարների «իշխանութեան տակ» եղող տարեմասերի, որով եւ ամբողջ տարեշրջանը դառնում է եռամաս՝ «արական» տարեմաս, «իգական» տարեմաս եւ արտատարեկան մաս: Աւելին. բուն տարին կարելի է տրոհել նաեւ հէնց երեք մասի. երեք տղաներին ձօնուած երեք ամիսներ, ապա՝ վեց համանման քոյրերին ձօնուած վեց ամիսներ եւ վերջում՝ եօթներորդ՝ միւսներից տարբեր քրոջը ձօնուած մէկ ամիս:

Բացի այդ, բուն տարին, որ տարեշրջանի միայն երկու մասերից է բաղկացած, իր հերթին, ինքը եւս տրոհուած է երեք (համարեա՛ հաւասար) մասերի: Առաջինը՝ երեք եղբայրներին ձօնուած մասն է, երկրորդը եւ երրորդը երեքական քոյրերին ձօնուած մասերն են՝: Այսինքն, բուն տարին ինքը տրոհուած է երեք մասի (եւ այդպիսի տրոհում հնարաւոր է իրականացնել տարբեր կերպերով):

Ստանում ենք, որ թէ՛ տարեշրջանը իբրեւ ժամանակային հիմնական ամենամեծ ամբողջութիւն, եւ թէ՛ տարին, իբրեւ տարեշրջանի մաս (արտօնեալ ժամանակի ամենամեծ ամբողջութիւն), երկուսն էլ իրենց հերթին տրոհուած են երեքական մասերի:

Գալով յաջորդ աստիճանի տրոհմանը, տեսնում ենք, որ տարեշրջանի երեք մասերից իւրաքանչիւրը, իր հերթին, եւս տրոհուած է առանձին ենթամասերի: Նայենք տարեմասերի ներքին տրոհումը:

Առաջին՝ Լոյս աշխարհին համապատասխանող տարեմասը ձօնուած է երեք տղաներին (երեք եղբայրներին) եւ տեւողութիւնն էլ երեք ամիս է: Այսինքն, այս տարեմասը, ինչպէս ամբողջ տարեշրջանը, ունի եռամաս ներքին կառուցուածք:

7 Սա այն դէպքում, երբ եօթներորդ քոյրը յստակ տարբերակուած հանդէս չի գալիս: Այստեղ հնարաւոր է տրոհում նաեւ երեք քոյրերին եւ նրանց ամուսին երեք դուստրին ձօնուած մասերի: Ըստ էութեան սրանք իրար համարժէք տրոհումներ են:

Յաջորդը աղջիկներին ձօնուած տարեմասն է: Հէքեաթներում այստեղ ունենք երեք քոյրեր<sup>8</sup> (կան տարբերակներ նաեւ՝ եօթ քոյրերով), իսկ Նախահայկեան օրացոյցում սրան զուգահեռ եօթ քոյրեր են (Հայկի եօթ դուստրերը): Սա, իր հերթին, տրոհուած է մասերի, ընդ որում՝ անհաւասար մասերի: Երկու մաս ձօնուած է վեց քոյրերին, երրորդը եօթներորդ քրոջը ձօնուած մասն է: Վեց քոյրերին ձօնուած երկու տարեմասերը համարեա՛ նոյնական են, իբրեւ մէկ ամբողջութեան կէսեր, որոնցից իւրաքանչիւրը ձօնուած է երեքական քոյրերի: Այսինքն, ստանում ենք, որ աղջիկներին (եօթ քոյրերին) ձօնուած տարեմասը եւս ունի եռամաս ներքին կառուցուածք (3 ամիս + 3 ամիս + 1 ամիս): Եւ այս երեք մասերից գոնէ երկուսը եւս եռամաս են<sup>9</sup>. Ղրանք ձօնուած են երեքական քոյրերի (ըստ որոշ տարբերակների՝ երեք քոյրերի եւ երեք դեւերի) եւ պարունակում են երեքական ամիս:

Տարեշրջանի վերջին՝ երրորդ մասը արտատարեկան օրերն են: Նախահայկեան օրացոյցում սրանք թուով 60-70 օրեր են, որ ամիսների չեն տրոհուած: Նախահայկեան օրացոյցում այս օրերի ներքին տրոհման մասին մենք տակաւին տեղեկութիւն չունենք: Սակայն, հիմք ընդունելով Հէքեաթների տուեալները, կարող ենք վստահ լինել, որ ժամանակի այս հատուածն էլ, ձօնուած լինելով երեք վիշապների, պիտի տրոհուած լինի դարձեալ երեք մասի:

Այսինքն, ունենք, որ մեծ միաւորից դէպի փոքր միաւոր յաջորդական տրոհումների բոլոր դէպքերում առկայ է միաւորների տրոհում երեքական մասերի: Եւ սա վերաբերում է թէ՛ տարածական տրոհմանը, եւ թէ՛ ժամանակայինին: Այսինքն՝ իբրեւ

8 Սիմամ քագաւորի պատմութեան մէջ այստեղ մայր ու դուստր եմ (Սիմամի կինն ու գոգանը), եւ իբրեւ երրորդ իգական կերպար հանդես է գալիս հացթուխի (որոշ տարբերակներում՝ վաճառականի) աղջիկը, որն էլ հէնց Սիմամին կախարդամբից ազատողն է. ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., ի էջ-միածին, 2008, Բ., 49-70:

9 Բնական է ակնկալել, որ եօթներորդ՝ միւսներից տարբեր բոջը ձօնուած ժամանակամիջոցը եւս ունենայ եռամաս ներքին կառուցուածք: Եւ կան տուեալներ, որ հաստատում են նաեւ ա՛յդ հատուածի եռամաս լինելը: Քանի որ այս հարցը ուղղակիօրէն չի աղերսւում յօդուածիս նիւթին, դրան այստեղ չենք անդրադառնայ՝ թողնելով դա այլ առիթի:

առաջին էական իրողութիւնն ունենք, որ միաւորի տրոհման սկզբունքը միշտ մէկը երեքի տրոհուելն է:

Նշենք մի էական իրողութիւնն եւս: Թէ՛ տարածութեան, եւ թէ՛ ժամանակի տրոհման պարագայում տրոհուած մասերը իրարից տարբերուում են բազմաթիւ սկզբունքային հիմնարար յատկանիշներով: Այսինքն, այս տրոհումները ոչ թէ պարզ մասնաբաժանումներ են, այլ սկզբունքային տրոհումներ են ըստ էական յատկանիշների: Նայենք սա փոքր-ինչ մանրամասն:

Աշխարհի տրոհուած երեք մասերն իրարից տարբերուում են իրենց գտնուելու վայրով (գետնի երես - Լոյս աշխարհ, գետնի տակ - Կախարդական աշխարհ եւ ակելի խորը - Անդունդք), լուսաւորութեան աստիճանով (լոյս, մութ եւ բացարձակ մութ) եւ գործող անձերով (երեք սղաններ, երեք աղջիկներ (երեք դեւեր) եւ երեք վիշապներ): Նոյն կերպ եւ այդ մասերից իւրաքանչիւրը տրոհուում է ենթամասերի՝ դարձեալ ըստ հիմնարար սկզբունքային յատկանիշների: Նոյնը ունենք նաեւ ժամանակի տրոհման պարագայում: Նայենք օրինակներով:

Տարածութիւնը տրոհուած է աշխարհների, որոնք իրարից տարբերուում են իրենց լուսաւորութեան աստիճանով՝ լուսաւոր, մութ, եւ բացարձակ մութ եւ գտնուելու վայրով: Բացի այդ, տարբեր են նաեւ այս աշխարհների «տէրերը»: Թագաւորի երեք որդիները<sup>10</sup>, երեք դեւերը եւ երեք վիշապները: Տարբեր են

10 Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ Լոյս աշխարհի «տէրը» թագաւորն է՝ երեք եղբայրների հայրը: Սակայն սա ճիշդ չէ: Բանն այն է, որ թագաւորը այդ աշխարհի «տէրը» եղել է մինչեւ այդ աշխարհի «պղծումը» (իբրեւ պղծման արտայայտութիւն այստեղ ունենք այգու չորանալը, կամ յատուկ ծառի պտուղների գողացուելը, կամ մի այլ նման իրադարձութիւն): Այդ աշխարհի «պղծումից» յետոյ թագաւորը այլեւս այդտեղ իրական իշխանութիւն չունի: Սրա վկայութիւնն է այն, որ այդ աշխարհի պղծումից յետոյ թագաւորն այլեւս ի գորու չէ վերականգնել աշխարհի նախնական կատարեալ վիճակը: Սրա օրինակ կարող է ծառայել նաեւ՝ Բարացած Բաղաճում թագաւորի կիսակենդանի լինելը, որ ունենք որոշ հե՛հեաթներում: Այսպիսի տարբերակներում ունենք թագաւոր, որ ոչ մի իշխանութիւն չունի ո՛չ իր երկրի, եւ ոչ էլ իր հպատակների վրայ տե՛ս, օրինակ, Հայ ժողովրդական Հե՛հեաթներ (ՀժՀ), հտ. 15, 1998, 31-37: Հէնց այս համգամանքը՝ թագաւորի իրական իշխանութիւն այլեւս չունենալն է պատճառ, որ նրա որդիներն են գնում փրկութիւնը բերելու, եւ փրկութիւնը բերուելուց յետոյ էլ թագաւորը իր յօժար կամքով փրկութիւնը բերող որդուն է բազմեցնում իր գահին: Ի դէպ, իշխանու-

նաեւ այդ աշխարհների գտնուելու վայրերը: Մէկը՝ Լոյս աշխարհը համընկնում է հէնց մեր սովորական աշխարհին, միւսը՝ Կախարդական աշխարհը դրանից վար է (այնտեղ իջնում են հորի միջով), իսկ երրորդը՝ Մուխ աշխարհը (կամ Անդունդքը) շատ աւելի վար է Կախարդական աշխարհից: Այսինքն, այս աշխարհները դասաւորուած են ուղղահիգ առանցքի վրայ եւ ունեն տարբեր բարձրութիւններ, ընդ որում՝ եթէ Լոյս ու Կախարդական աշխարհների բարձրութիւնների տարբերութիւնը մեծ է (այնտեղ կարելի է իջնել հորի միջով, պարանով, այսինքն՝ դրանց հեռաւորութիւնը պարանի երկարութիւնից<sup>11</sup> աւելի է), ապա Կախարդական եւ Մուխ աշխարհների տարբերութիւնը շատ մեծ է (այնտեղ տանում են տարագոյն ձիերը, իսկ այնտեղից դուրս հանում է յատուկ թռչունը): Այս տարբեր աշխարհների՝ ուղղահիգ առանքով դասաւորուած լինելու վկայութիւն է եւ այն, որ Մուխ աշխարհից Լոյս աշխարհ եւ... հակառակ ուղղութեամբ տղային տանող թռչունը կամ անընդհատ բարձրանում է, եւ կամ՝ անընդհատ իջնում:

Սկզբունքօրէն տարբեր են նաեւ մասերի գումային բնութագրերը: Այսպէս, եթէ Լոյս աշխարհում գունային տարբերութիւնն արտայայտուած է հիմնականում կրտսեր որդու ոսկեգանգուր եւ ոսկեճկոյթ լինելով (միւս տղաների գոյները չեն նշուում), ապա Կախարդական աշխարհում յստակ ունենք երեք դեւերի գունային տարբերակում: Դեւ եղբայրները իրարից տարբերում են թէ՛ իրենց հզօրութեամբ, թէ՛ իրենց կանանց գեղեցկութեամբ, եւ թէ՛ իրենց ու իրենց տիրոյթների գոյներով (յաճախ սրանց զուգահեռ կայ նաեւ դեւերի գլուխների քանակների տարբերութիւն): Դրանք իրար հերթագայում են հիմնականում մերմակ, կարմիր ու սև յաջորդականութեամբ: (Կան տար-

---

թեան այս փոխանցումը թագաւորից իր երեք որդիներին դարձեալ օրինակ է մէկը երեքի տրոհուելուն: Այս պարագայում էլ ունենք գերագոյն իշխանութեան տրոհում: Եւ հեքեաթներում մշտապէս կայ նաև դրա յաջորդ փուլին անցնելը՝ իշխանութիւնը ի վերջոյ երեք եղբայրներից անցնում է մէկին՝ փոքրին: Բնական է, քանի որ սա պարբերական իրադարձութեան մկարագրութիւն է, ապա յաջորդ փուլում եւս պիտի լինի իշխանութեան անցում այդ նոր միակ թագաւորից նրա երեք որդիներին, եւ այսպէս՝ շարունակ:

11 Ընդհանրապէս, պարանի երկարութիւնը որոշ դեպքերում օգտագործուած է իբրև երկարութեան չափման միաւոր:

բերականեր, ուր տարբեր են նաև այս դեւերի գլուխների թուե-  
րը):

Այս նոյն՝ երեք տարբեր գոյների արտայայտութիւնը կարե-  
լի է դիտել նաև տղայի եւ դեւերի կուռի վայրի տարբեր լինե-  
լը տարբեր անգամներ: Այսպէս, տղան դեւի հետ կուռում է պղծէ  
կալի վրայ, ապա արձիճէ եւ ի վերջոյ՝ երկաթէ կալի վրայ<sup>12</sup>:  
Այստեղ երեք տարբեր մետաղները նաև երեք գոյներ են նշանա-  
կում. պղինձը, ինչպէս գիտենք, կարմիր է, երկաթը, թէպէտ  
արտաքնապէս սեւ է (եւ մեր օրերում հէնց «սև մետաղ» էլ հա-  
մարում է), սակայն երկաթի բուն գոյնը արծաթաուռն-սպի-  
տակն է: Դրանում համոզուելու համար բաւարար է երկաթեայ  
կամայական իրի վրայ քերծուածք առաջացնել (խարտոցով, կամ  
այլ կերպ): Իսկ գալով արձիճին, այս մետաղը յստակ գորշ (մուգ  
մոխրագոյն) գոյն ունի, որ կարելի է մօտիկ համարել սեւին:  
Այսինքն, կարելի է այս մետաղների գունային զուգահեռներ-  
նշանակներ համարել կարմիր (պղինձ), սպիտակ (երկաթ) եւ սեւ  
(արձիճ) գոյները<sup>13</sup>: Սրանով այս մետաղական խորհրդանշանները  
եւս կրկնում են կախարդական աշխարհի մասերի (ենթաաշ-  
խարհների) եւ դրանց տէր դեւերի ու նաև տարբեր տեղեր տա-  
նող ձիերի գոյները:

Ուշագրաւ է, որ այս երեք գոյների ի յայտ գալը իբրեւ  
հական տարբերակիչ յատկանիշներ, կախարդական աշխարհում  
առկայ է երկու անգամ. մէկը երեք դեւերն են, երեք տարբեր  
գոյներով ու տիրոջներով, միւսը այդ նոյն աշխարհի մուտքի  
(ու նաև ելքի) մօտ գուռից, կամ աղբիւրից ջուր խմող  
ձիերը<sup>14</sup>: Ի դէպ, այս նոյն երեք գոյնի ձիերին մենք տեսնում  
ենք նաև Սասնայ Մուրում, երբ Օհանը փորձում է օգնութեան

12 ՀԺՀ, հտ. 13, 1985, 66:

13 Ի դէպ, այս ամենին լաւ ներդաշնակում է նաև այս մետաղներին գու-  
գադրուած մոլորակների շարքը: Պղինձը գուգադրուած է Արուսեակին  
(Venus), կապարը գուգադրուած է Նրեակին (Saturn), երկաթն էլ՝ Լու-  
սընթագին (Jovis Pater – Jupiter):

14 Կան տարբերակներ, ուր այս տարագոյն ձիերի փոխարէն առկայ են այդ  
նոյն գոյներով ու նոյն գործառոյթով հանդէս եկող խոյեր. ՀԺՀ, հտ. 2,  
1959, 29-30: Առանձին եւ կարեւոր հարց է, թէ ինչո՞վ է պայմանաւորու-  
ած միւսնոյն կերպարի երկու տարբերակներով հանդէս գալը, եւ ո՞րն  
է սրանցից նախնականը: Քամի որ սա դուրս է մեր խնդրից, դրան  
այստեղ չենք անդրադառնայ:

հասնել հորում գտնուող Դաւիթին: Եւ այս նոյն երեք գոյնի ձիերը ունենք հէքեաթի բազմաթիւ տարբերակների վերջնամասերում, երբ տղան երեք անգամ ծափուած հանդէս է գալիս մրցոյթներում կամ կռուի դաշտում երեք տարբեր գոյների ձիերով ու համապատասխան գոյնի հանդերձով:

Կարեւոր հարց է, թէ ի՛նչ են նշանակում այս ձիերի (եւ դեւերի ու նրանց տիրոյթների) երեք գոյները: Թէպէտ այս հարցը դուրս է յօդուածիս բուն խնդրի շրջանակից, այդուհանդերձ, ի նկատի ունենալով դրա կարեւորութիւնը, արժէ այստեղ համառօտակի անդրադառնալ նաեւ դրան:

Դեւերի, նրանց տիրոյթների եւ ձիերի գոյները շատ հետաքրքիր են խորհրդանշական առումով: Եթէ մերմակ, կարմիր ու սև գոյներին վերաբերուենք իբրեւ խորհրդանշանների (իսկ այլ կերպ դրանց վերաբերուել չի էլ կարելի), ապա ստիպուած պիտի լինենք դրանք զուգադրել տարուայ եղանակների խորհրդանիշ գոյների հետ: Այսպէս, գիտենք, որ մերմակը խորհրդանշում է ձմեռը, կարմիրը՝ ամառը<sup>15</sup>: Միւս կողմից էլ գիտենք, որ հնում նախքան տարին չորս եղանակի տրոհելը, եղել է տարին երեք, իսկ աւելի առաջ՝ նաեւ միայն երկու եղանակի բաժանելու աւնդոյթ<sup>16</sup>: Արդ, եթէ կարմիրն ու ճերմակը զուգադրենք ամառուանն ու ձմերուանը, ապա այս երկու գոյները միասին կը ներկայացնեն ամառն ու ձմեռը, այսինքն՝ տարուայ տաք ու ցուրտ մասերը, որով եւ՝ ամբողջ տարին: Եւ, եթէ կարմիր ու ճերմակ գոյներով «լրացում» է տարին, ապա, բնականաբար, սեւն էլ այս նոյն մօտեցմամբ պիտի նշանակի արտատարեկան ժամանակը<sup>17</sup>: Այս կերպ կը ստացուի, որ այս երեք գոյնի ձիերը եւ դեւերը նշանակում են պարզապէս ամառն ու ձմեռը, այսինքն՝ ամբողջ տարին եւ նաեւ արտատարեկան շրջանը, որով լրիւ ամբողջանում է տարեշրջանը<sup>18</sup>: Ձիերի գոյների այսպիսի մեկնաբանումը հաս-

15 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Օրացոյց Հայոց*, ի էջմիածին, 1997, 345-347:

16 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., ի *Բագմավէպ*, 2007, 154-155:

17 Սա լիովին ներդաշնակ է արտատարեկան ժամանակահատուածը Անդունդֆին, Մուք աշխարհին ձօնուած լինելուն: Սա հէնց ամենամուք աշխարհն է եւ, բնականաբար, պիտի սեւ լինի:

18 Այս առումով կարելու է, որ որոշ հէֆեաթներում դեւերն իրար յաջորդում են հէնց *կարմիր-սպիտակ-սեւ* յաջորդականութեամբ. ՀԺՀ, հտ. 1, 1959, 29-34: Կայ նաեւ նոյնի այլ տարբերակը՝ *սեւ-կարմիր-սպիտակ*, ուր սեւը վերջում լինելու փոխարէն շարքի սկզբում է. ՀԺՀ, հտ. 2,

կանալի է դարձնում նաեւ, թէ ինչու այս ձիերը կարողանում են տղային հասցնել կամայական վայր, ընդ որում՝ անասելի արագ, համարեա՝ ակնթարթօրէն: Պատճառն այն է, որ այս երեք գոյնի ձիերը՝ պատկեր, նշանակն են ամբողջ տարեշրջանի, որով եւ՝ դրան զուգահէտ՝ ամբողջ աշխարհի, Տիեզերքի: Սրանով նրանք նոյնական են ամբողջ աշխարհի կամայական վայրի, կամայական կէտի հետ: Այդ պատճառով էլ, սոյն ձիերից ոեւէ մէկին նստելը համարժէք է աշխարհի՝ այդ նոյն ձիուն համապատասխան տարածքում, վայրում յայտնուելուն: Այսինքն, այդ ձիերը չեն «տանում», «տեղափոխում» սովորական իմաստով, այլ այս պարագայում տեղի ունի նշանակի-խորհրդանշանի միջոցով դրա նշանակած-արտայայտած վայրում անմիջապէս յայտնուելու իրողութիւնը: Ի դէպ, հէնց այս պիտի լինի պատճառը նաեւ այն բանի, որ Սասնայ Ծռերի յայտնի դրուագում, երբ Օհանը դիմում է ճերմակ ու կարմիր ձիերին՝ իրեն Դաւթի մօտ հասցնելու համար, սրանք չեն կարողանում ակնթարթօրէն հասցնել, իսկ սեւ ձին ի զօրու է հասցնել ակնթարթօրէն: Սա կարելի է բացատրել հետեւեալ կերպ: Դաւիթը տուեալ պահին գտնուում է հորի մէջ, որ, ըստ հուլիանի, Անդունդի-Անդրաշխարհի իմաստ պիտի ունենայ: Իսկ ճերմակ ու կարմիր ձիերը այլ աշխարհների խորհրդանշելու են. բնականաբար, նրանք Մութ աշխարհ-Անդունդք պիտի կարողանան հասցնել ոչ ուղղակիօրէն, այլ միայն միջնորդաւորուած կերպով (այլ աշխարհների միջով), իսկ սա արդէն երկար «ճանապարհ» է. այստեղից էլ՝ դրա համար պահանջուող երկար ժամանակը: Իսկ սեւ ձին իր գոյնով հէնց Մութ աշխարհի նշանակն է, եւ, ըստ այդմ, նրան նստելը կը նշանակի մի անգամից յայտնուել այդ Մութ աշխարհում:

Ի դէպ, գոյների այսպիսի մեկնաբանութեամբ հնարաւոր է դառնում բացատրել նաեւ հէքեաթների վերջնամասում յաճախ հանդիպող դրուագը, երբ տղան ծպտուած վերադառնալով Լոյս աշխարհ, երեք անգամ երեք տարբեր գոյնի ձիերով յայտնուում

1959, 110-117: Եւ սա էլ համընկնում է Նախահայկեան օրացոյցում տարեշրջանի մէջ բուն տարուայ (դրա մասերի) եւ արտատարեկան հատուածի յաջորդականութեամբ: Այսպէս, Նախահայկեան օրացոյցում տարեշրջանն սկսում է ամառով (կարմիր), ապա յաջորդում են աշունն ու ձմեռը (սպիտակ), սրանց յաջորդում են արտատարեկան օրերը (սեւ): Կայ նաեւ դեւերի գոյների սեւ-կարմիր-սպիտակ յաջորդականութիւն (ՀժՀ, հտ. 1, 1959, 108-112): Սա էլ զուգադրելի է տարեշրջանը արտատարեկան օրերով (կամ դրանց մի մասով) սկսուելու տարբերակին:

ու յաղթականօրէն մասնակցում է կռուին կամ մրցումներին: Այս դրուագը հէքեաթի իրադարձութիւնների զարգացման ընդհանուր գծի մէջ «աւելորդի» տպաւորութիւն է թողնում: Տղայի այս ելոյթների անհրաժեշտութիւնը ոչ մի կերպ չի բխում հէքեաթներում նկարագրուած դէպքերի զարգացման ընդհանուր տրամաբանութիւնից: Սակայն, երբ այս տարագոյն ձիերին տանք նրանց խորհրդանշական իմաստները, պատկերը կը դառնայ լիովին հասկանալի: Փաստօրէն, այս երեք տարագոյն ցուցադրական ելոյթներով սղան խորհրդանշօրէն վերապատմում, կրկնում է իր յաղթանակները, իր կատարած սխրանքները երեք աշխարհներում: Դրանով նա իմաց է անում թէ՛ թագաւորին, եւ թէ՛ մնացեալ ամբողջ աշխարհին իր կատարածների եւ իր վերադարձի մասին:

Դեւերի եւ նրանց տիրոյթների երեք գոյների լինելը նշանակում է, որ այս դեւերի (Կախարդական) աշխարհը եւս տրոհուած է երեք մասի: Իսկ ձիերի երեք լինելը եւ գոյներով իրարից տարբեր լինելը զուգահեռ է հէքեաթի սկզբնամասի այն դրուագին, երբ երեք եղբայրները հասնում են ճամբաբաժանի, որտեղից հնարաւոր է գնալ երեք ուղիով: Եւ այդ երեք ուղիներն ունեն յստակ իրարից տարբերուող բնութագրեր. դրանք տանում են խիստ տարբեր տեղեր: Բնականաբար, սրանք պիտի լինեն նախնական միասնական աշխարհի եռամաս տրոհմամբ առաջացած երեք տարբեր աշխարհները<sup>19</sup>: Նոյն կերպ էլ երեք տարբեր գոյնի ձիերը հերոսին տարբեր աշխարհներ են հասցնում: Եւ, ինչպէս ճամբաբաժանում կրտսեր եղբայրն ընտրում է այն ուղին, որով գնացողը ետ չի գալիս (սա անդարձ ուղին է, այսինքն՝ Անդրաշխարհի ուղին), այդպէս էլ Կախարդական աշխարհում երեք ձիերից սղան ցատկում է հէնց այն մէկի վրայ, որ նրան իջեցնում է Անդունդք՝ ամենաանելանելի վայրը: Այսինքն, երկու դէպքում էլ սղայի ընտրութիւնը կատարում է միեւնոյն սկզբունքով: Սա եւս ցուցանում է այն, որ աղբիւրի

19 Օրինակ, այս ֆանապարհներից մէկը տանում է «այն աշխարհը, որտեղից ետ դարձ չկայ»: Սա ուղղակի ակնարկ է առ այն, որ այստեղ խօսքը Անդրաշխարհի՝ Մուք աշխարհի մասին է: Բնականաբար, եթէ երեք աշխարհներից մէկը Անդրաշխարհն է, ուրեմն միւս երկուսն էլ պիտի լինեն Լոյս աշխարհն ու Կախարդական աշխարհը: Այս է պատճառը, որ սղայի եղբայրները յետոյ իրենց գնացած այդ աշխարհներում կախարդուած են լինում, կամ քար դարած (եւ կամ նման մի այլ բան) եւ նրանց այդ վիճակից փրկելու կարիք է լինում, որ եւ անում է փոքր տղան:

մօտ սեւ ձիու փոխարէն սպիտակ ձիու վրայ ցատկելը տղայի կողմից ոչ թէ վրիպում է, այլ օրինաչափ գործողութիւն<sup>20</sup> :

Նայենք, թէ ինչ այլ տեղեկոյթ կարող ենք ստանալ մեր հէքեաթների վերլուծութեամբ:

Տարածա-ժամանակային ընկալման յաջորդ սկզբունքային առանձնայատկութիւնը ամբողջի եւ դրա ամենափոքր մասի համապատասխանեցում-հաւասարեցումն է: Մա տեսնում ենք թէ՛ տարածութեան կառուցուածքում, եւ թէ՛ ժամանակի: Այսպէս, Լոյս աշխարհի մի փոքրիկ կէտից (դեւի ելումուտ արած փոսից կամ ծակից) սկսում է մի ամբողջ նոր աշխարհ՝ դեւերի աշխարհը կամ Կախարդական աշխարհը: Արդէն այդ երկրորդ՝ Կախարդական աշխարհում էլ մի կէտից (ձիերի կամ խոյերի ջուր խմելու աղբիւրից կամ գուռից) սկսում է մի այլ աշխարհ՝ Մութ աշխարհը կամ Անդունդքը: Այսինքն՝ մի աշխարհի մէկ եզակի կէտը համապատասխանեցուած-հաւասարեցուած է մի այլ աշխարհի ամբողջութեանը: Ի դէպ, այստեղ աղբիւրից կամ գուռից մի նոր աշխարհ (Մութ աշխարհը) սկսուելը անմիջապէս յիշեցնում է աղբիւրի ակից ջրարգել վիշապի դուրս գալը: Փաստօրէն այս դրուագում աղբիւրի ակը հանդէս է գալիս իբրեւ դուռ, անցման կէտ, որով՝ մի աշխարհից անցում է կատարում մի այլ աշխարհ: Այս նոյնն է նաեւ Կախարդական աշխարհում աղբիւրի մօտից տարագոյն ձիերի միջոցով տղայի տեղափոխումը յաջորդ աշխարհ: Եւ այս առումով սա զուգադրելի է շումերական Գիլգամէշի ուղեւորութեան այն դրուագին, ուր նա, գետի ընթացքին հակառակ ճամբորդելով, մտնում է քարանձաւային աշխարհ, անցնում անձանների միջով տասներկու ասպարէզ եւ միւս կողմից դուրս գալիս արդէն բոլորովին այլ աշխարհ, որտեղից եւ ի վերջոյ կարողանում է հասնել իր նպատակակէտին՝ այն կղզին, ուր ապրում են երանութեան հասածները<sup>21</sup>: Այս երեք դէպքերում էլ ունենք ջրի ակի միջով մի աշխարհից մի այլ աշխարհ անցնելու իրողութիւնը:

Այս նոյն կերպ են իրար յարաբերում նաեւ ժամանակի մասերը: Այսպէս, Տարեմուտի մէջն մի եզակի պահի մէջ տեղի են ունենում իրադարձութիւններ, որ մի ամբողջ տարի են տեւում: «Արտաքին» աշխարհում դա միայն մէկ պահ է, առանց տեւողութեան, իսկ «ներքին» աշխարհում դրան համապատասխանում է

20 Այս մասին տե՛ս Ասու ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., ի էքմիածին, 2009, թԲ., 73-77:

21 Տե՛ս, օրինակ, Հիմ արեւելքի պօզգիա, Նրեւան 1982, 143-146:

մի ամբողջ տարի, այսինքն՝ ժամանակային մէկ լրիւ պարբերաչրջան, որի ընթացքում տեղի են ունենում այդ արտաքին աշխարհի համար հական կարեւորութիւն ունեցող բոլոր իրադարձութիւնները: Հէքեաթներում դա բացատրում է համարելով, որ «ճերբին» աշխարհում իրադարձութիւնների տեղի ունենալու ընթացքում «արտաքին» աշխարհում ժամանակը պարզապէս կանգ է առնում: Այսինքն՝ «ճերբին» աշխարհի ամբողջ ժամանակային պարբերաչրջանը (որ պիտի լինի այդ աշխարհի տարին) «արտաքին» աշխարհում պարզապէս տեւողութիւն չունի: Փաստօրէն, այստեղ ունենք զրօի եւ անվերջութեան հաւասարեցում, նոյնացում:

Փորձենք հասկանալ, թէ ի՞նչ է նշանակում այն, որ այդ պահին կանգ է առնում ժամանակը: Երբ նայում ենք հէքեաթի իրադարձութիւնների նկարագրութիւնը, տեսնում ենք, որ սովորական իմաստով «ժամանակի կանգ» տեղի չի ունենում: Սովորական աշխարհի բնակիչները ժամանակի այդ «կանգը» բնաւ չեն նկատում: Այդ եզակի պահին պարզապէս հերոսը կարողանում է սովորական ժամանակային իրականութիւնից դուրս գալ եւ մտնել մի այլ ժամանակային իրականութեան մէջ, մի այլ «ժամանակային աշխարհ»: Եւ այդ նոր աշխարհում նա գործում է մէկ տարի (այդ աշխարհի ժամանակով): Մինչդեռ հերոսի ելակէտային սովորական աշխարհում ժամանակը «կանգ է առած»: Հերոսը իր գործողութիւնները կատարելուց յետոյ վերադառնում է ժամանակի հէնց այն պահը, որից նա սկսել էր իր «արտագնայ» ընթացքը: Այսինքն, այստեղ ունենք ոչ թէ ժամանակի կանգ առնել, այլ ժամանակի մի պահի (մի կէտի) մէջ մի ամբողջ ժամանակային յաւերժութիւն տեղաւորելու պատկերացում: Այսինքն, ժամանակային աշխարհի մի կէտը համապատասխանեցուած-համարժէ է դարձուած ժամանակային մի այլ ամբողջական աշխարհի: Այս նոյն երեւոյթը տեսնում ենք հէքեաթների հէնց սկզբնամասի այն դրուագում, երբ շուրջանակի պատող վիշապը տղային ուղարկում է Մինամի գաղտնիքը բերելու եւ տղայի հարսնացուին պահում է իր մօտ: Այստեղ ունենք հարսանիքի արարողութեան ընդհատում հարսի տնից փեսայի տուն գնալու ճանապարհին: Այսինքն՝ երկու հակադիր «աշխարհների» սահմանին (հարսի տուն - իզական սկիզբ, Մութ աշխարհ / փեսայի

տուն - արական սկիզբ, Հոյս աշխարհ)<sup>22</sup>: Եւ սրան զուգահեռ էլ՝ այս ամէնը տեղի է ունենում այդ վիշապի գլխի եւ տտան կցման տեղում, այսինքն՝ վիշապի հակադիր ծայրերի կցման մասում: Հարսանիքը այս պահին, փաստորէն, ընդհատուած է, եւ տղան գնում է տարբեր աշխարհներ, սխրանքներ է գործում ու ետ դառնում էլի նոյն վայրը եւ նոյն պահը: Հէքեաթի վերջում տղայի հարսանիքը շարունակուած-աւարտուած է: Այսինքն, այս կէտից՝ տղայի մեկնումից մինչ վերադարձը սովորական աշխարհում ժամանակ չի անցնում, այդտեղ ունենք որոշ իմաստով «ժամանակի կանգ»: Եւ այդ կանգ առած ժամանակի եզակի պահի մէջ ունենք մի այլ (իրականում՝ մի քանի) ժամանակային յաւերժութիւն(ներ): Այս նոյնը առկայ է նաեւ Հէքեաթի այլ դրուագներում: Այս նոյնը տեսնում ենք Սասնայ Մռերի որոշ պատումներում: Այստեղ էլ Սանասարը (որոշ տարբերակներում՝ նաեւ իր երկուորեակ եղբայրը) Քաջանց աշխարհից, ուր եկել էին «աղջիկ ուզելու», Հէնց հարսնացուի (կամ նրա հօր) յանձնարարութեամբ մեկնում են կանաչ քաղաք (Մութ աշխարհ): Այստեղ կատարում են էական սխրանքներ (վիշապներ են սպանում, ջուրն ազատում, փրկում հարսնացուին եւ թռչունի ձագերին եւն.) եւ վերադառնում ետ՝ շարունակում կիսատ մնացած «խնամախօսութիւնը»: Այսինքն, այս պարագայում եւս ունենք «ժամանակի կանգ» ամուսնութեան ծէսի որոշակի փուլում եւ այդ կանգ առած ժամանակային պահի մէջ՝ ժամանակային մի այլ ամբողջական աշխարհ:

Իրավիճակը թէ՛ տարածական, եւ թէ՛ ժամանակային առումով նման է ուսական աւանդական յայտնի խաղալիքին, որն իրենից ներկայացնում է իրար մէջ ներդրուած փայտեայ տիկնիկներ (կանացի տեսքով):

Այսպէս, ստանում ենք տարածա-ժամանակային ընկալման մի այլ հիմնարար յատկանիշ եւս. ե՛լ տարածութեան, ե՛լ ժամանակի ընկալման մէջ առկայ է ամբողջի եւ դրա փոքրագոյն մասի համատեղում-նոյնացում-հաւասարեցում: Այսինքն՝ ունենք եզակի կէտի եւ ամբողջի համապատասխանեցում եւ, եթէ արտայայտուենք թուերի լեզուով, սա կը նշանակի գրոյի եւ անվերջութեան համապատասխանեցում-հաւասարեցում-նոյնացում:

22 Ի դէպ, հարսանիքը հենց այդ երկու (հակադիր) աշխարհները (իգականը եւ արականը) իրար կցելու ծես է նաեւ:

Յաջորդ էական հանգամանքը տարածութեան եւ ժամանակի տարբեր մասերի (ժամանակային եւ տարածական տարբեր աշխարհների) միջեւ պատճառական կապն է: Ըստ հէքեաթներում եւ դիցավէպում նկարագրուած անցքերի տրամաբանութեան, սրանցում առկայ տարբեր աշխարհների միջեւ կան պատճառական կապեր եւ այդ կապերը ունեն խիստ որոշակի ուղղուածութիւն: Այսպէս. Լոյս աշխարհի կարգի խաթարման պատճառը Կախարդական աշխարհի գործող անձինք եւ նրանց գործողութիւններն են: Օրինակ, Լոյս աշխարհի այգու խնձորների գողը Կախարդական աշխարհից եկած դեւն է: Այսինքն՝ Լոյս աշխարհի բնականոն կարգի խաթարման պատճառը Կախարդական աշխարհի գործող անձն է. եւ նրա գործողութիւնը: Նոյնը ունենք նաեւ Սասնայ Շուերում. այստեղ էլ (Լոյս աշխարհի) Սանասարին ու իր եղբօրը գժտեցնողը, նրանց իրար դէմ հանողը, նրանց կեանքի բնականոն ընթացքը խաթարողը Քաջանց (Կախարդական) աշխարհի հմայող աղջիկն է՝ Դեղձունը: Եւ նրա հմայքը խափանելու ու նրա հետ ամուսնանալու համար է Սանասարը գնում Քաջանց աշխարհ: Նոյն առնչութիւնը կայ նաեւ Քաջանց (Կախարդական) աշխարհի եւ Կանաչ քաղաքի (Մութ աշխարհի, Անդունդքի) միջեւ: Այստեղ էլ Դեղձունին հարս տանելու համար հարկ է նախ գնալ Մութ աշխարհ եւ այնտեղ կատարել համապատասխան գործողութիւններ, որից յետոյ միայն հնարաւոր կը դառնայ Դեղձունին հարս տանելը: Այս նոյնի օրինակ կարող է ծառայել Սինամ թագաւորի դրուագը տարբեր հէքեաթների մէջ: Այս տարբեր տեղերում էլ Լոյս աշխարհի եւ Կախարդական աշխարհի սահմանին<sup>23</sup> հերոսների ընթացքը կասեցնող՝ տարածքը շուրջանակի փակող վիշապի դիւթանքի բանալին Անդրաշխարհից բերուող՝ Սինամի գաղտնիքն է: Այսինքն, վերին երկու աշ-

23 Թեպէտ հէքեաթների մեզ հասած տարբերակներում չկան ուղղակի վկայութիւններ այն մասին, որ այս վիշապը Լոյս աշխարհի եւ Կախարդական աշխարհի սահմանին է հանդէս գալիս, սակայն սրա հետ կապուած իրողութիւնների վերլուծումը ցոյց է տալիս, որ դա հէնց այդպէս էլ պիտի լինի: Ինչպէս ժամանակին ցոյց էր տրուել (ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., ի էջմիածին, 2009, ԺԲ., 82-83), այս վիշապը հանդէս է գալիս, փաստօրէն, հարսանիքի ընթացքում, աղջկայ տնից տղայի տուն գնալու ճանապարհին, որ հէնց նշանակում է՝ Կախարդական աշխարհից Լոյս աշխարհ անցնելիս: Եւ քանի որ վիշապն էլ միւս կողմից ունի սահմանային բնոյթ, բնական է որ նրա հանդէս գալը լինի հէնց այդ աշխարհների սահմանին:

խարհների սահմանին իրերի, գործողութիւնների բնականոն ընթացքի խաթարման պատճառը դրանցից վար գտնուող Անդրաշխարհից բերուելիք գաղտնիքի պակասն է, չլինելը:

Այս նոյնը՝ տարբեր մասերի միջեւ պատճառական կապի առկայութիւնը տեսնում ենք նաեւ ժամանակի պարագայում: Այսպէս. երբ տղան Կախարդական աշխարհում իր ուղեւորութեան ընթացքում հանդիպում է ժամանակը մարմնաւորող ծերունուն (որոշ տարբերակներում նրա անունը հէնց Ժուկ-ժամանակ է), իր գործերը հասցնելու համար նա դիմում է ծերունուն, որ դադարեցնի գիշերային ժամանակը խորհրդանշող սեւ թելի կծկումը: Սրան ի պատասխան, ծերունին յայտնում է, որ եթէ նման բան արուի, ապա (Լոյս) աշխարհում ապրող մարդկանց ժամանակը կանգ կ'առնի: Այսինքն՝ Կախարդական աշխարհում թելի կծկումը կասեցնելը՝ հանգեցնում է Լոյս աշխարհում ժամանակը կանգ առնելուն:

Ժամանակային աշխարհների միջեւ այս նոյն պատճառական կապի աւելի ցայտուն դրսեւորում է այն, որ արտատարեկան ժամանակամիջոցի ընթացքում տեղի ունեցած իրադարձութիւնները պատճառ են դառնում ամբողջ տարուայ ընթացքում տեղի ունենալիք իրադարձութիւնների համար:

Մի այլ իրողութիւն էլ վերը նշուած պատճառական կապի հակառակ ուղղութեամբ յետադարձ կապի առկայութիւնն է: Տարբեր աշխարհներում տեղի ունեցող իրադարձութիւնների միջեւ, ստորին աշխարհից դէպի վերին աշխարհը պատճառական կապին գուգահեռ՝ տեսնում ենք նաեւ, այդ նոյն աշխարհների իրադարձութիւնների միջեւ, հակառակ ուղղութեամբ գործող յետադարձ կապ, բնականաբար՝ ուղղակի պատճառական կապից աւելի թոյլ արտայայտուած: Սրա օրինակ կարելի է դիտել հէքեաթների վերը նշուած դրուագում հետեւեալ մանրամասնը: Երբ տղան ժամանակը մարմնաւորող ծերունուն բռնի ուժով կաշկանդելուց եւ թելերի կծիկները սարից վար գլորելուց-արձակելուց յետոյ իր բոլոր անելիքները արած-աւարտած վերադառնում է ծերունու մօտ ու սկսում են միասին ետ կծկել թելերը, տեսնում են, որ այդ թելերի վրայ պոկուած-կտրտուած տեղեր կան: Այդ կտրտուած տեղերը կապկպում են, եւ այդ կերպ թելերի վրայ հանդոյցներ են յայտնուում: Մերունին բացարտում է, որ դրանք մարդկային ընդհատուած կեանքերի հետքերն են: Այսինքն, երբ սովորական

աշխարհում մահ է պատահել, դրա պատճառը պարունակող աշխարհում էլ ժամանակի ընթացքն արտայայտող թելի վրայ կտրտուած տեղեր ու հանգոյցներ են ի յայտ եկել:

Նոյն յետադարձ կապի արտայայտութիւն կարելի է դիտել նաեւ տղայի եւ դեւի մենամարտի դղրդիւնի արձագանգը իբրեւ երկրաշարժ լսուելը Լոյս աշխարհում: Այս նոյնն է նաեւ Դաւիթի եւ Մելիքի մենամարտի զարկերի յետեւանքը իբրեւ երկրաշարժ ընկալելը: Այստեղ Մելիքի տարածքը, ըստ հուլիանի, պիտի համարել Մութ աշխարհ, դեւերի աշխարհ: Ճիշդ է, այդ կռիւը տեղի է ունենում Սասունի տարածքում, սակայն դա արդէն Մելիքի գրաւած-նուաճած եւ իրենը դարձրած տարածքն է. այդտեղ արդէն Մելիքի զօրքն է նստած: Իսկ Մելիքն էլ, ինչպէս գիտենք, դեւ է, նրա կերպարը բազմաթիւ յատկանիշներով հէնց դեւային է: Այսինքն, Դաւիթի ու Մելիքի կռիւը տեղի է ունենում Մութ աշխարհում, դեւերի աշխարհում: Եւ այդ աշխարհի կռուի յետեւանքը Լոյս աշխարհում երկրաշարժն է եւ վերջինիս ձայնը:

Մի այլ իրողութիւն էլ այն է, որ մի աշխարհի առարկան եւ իրադարձութիւնը (գործողութիւնը) դրա նախորդ կարգի աշխարհում արտայայտուած է ոչ թէ ուղղակիօրէն, այլ իրենց համապատասխան նշանակներով-խորհրդանշաններով: Այսպէս, Լոյս աշխարհում սպրող մարդկանց կեանքի ժամանակի դիմաց կախարդական աշխարհում ունենք սեւ ու սպիտակ թելեր: Այս կապակցութեամբ յիշենք, որ ժամանակը հնագոյն պատկերացումներում արտայայտուել է հէնց թելի միջոցով, որից էլ մինչ օրս հայերէնում մնացել է «կեանքի թել» արտայայտութիւնը: Այս նոյնի դրսեւորում է նաեւ Լոյս աշխարհում տեղի ունեցած մահը կախարդական աշխարհում ժամանակը նշանակող թելի վրայ հանգոյցով արտայայտելը: Այս առիթով էլ յիշենք, որ մեր իրականութեան մէջ մինչ օրս յարատեւող տարբեր մոգական-կախարդական գործողութիւնների շարքում առկայ է մարդուն վնասելու, մահ պատճառելու համար հանգուցուած թելերով զանազան հմայիլներ պատրաստելու յոռի աւանդոյթը: Ի դէպ, սրա հետ էլ պիտի կապուած լինի այսպիսի գործողութիւններին աւանդաբար տրուող «գիր ու կապ» յորջորջումը: Այս երկու օրինակներում տեսնում ենք, որ մի աշխարհի կեանքը (ժամանակը)

եւ մահը յաջորդ աշխարհում նշանակուած են թելով եւ այդ թելի վրայ արուած հանգոյցով:

Նոյնի օրինակ է նաեւ այն, որ Կախարդական աշխարհի Դեղձունի հմայքի ակը ծովի յատակում (այսինքն՝ դրանից մի աշխարհ ներքեւ՝ Անդրաշխարհում) վիշապի գլխին կամ բերանում է: Այստեղ էլ Դեղձունը մէկ աշխարհ ներքեւում փոխարինուած է իր նշանակով, որ վիշապն է: Նոյնն է նաեւ այն, որ Դեղձունի ոսկի խնձորն էլ սեան գլխին է դրուած: Այստեղ էլ ունենք, որ Կախարդական աշխարհի աղջիկը դրանից վեր՝ Լոյս աշխարհում (սիւնի գլխին) արտայայտուած է ոսկի խնձորով: Այսինքն, ունենում ենք միեւնոյն կերպարի երեք տարբեր արտայայտութիւնները երեք տարբեր աշխարհներում երեք տարբեր նշանակներով՝ ոսկի խնձոր - աղջիկ - վիշապ (Լոյս աշխարհում, Կախարդական աշխարհում եւ Անդրաշխարհում):

Այս նոյնը վերաբերում է նաեւ իրադարձութիւններին-գործողութիւններին: Այսպէս. Կախարդական աշխարհում կտրտուած թելերը կապկպելը նշանակում է Լոյս աշխարհում «ընդհատուած» ժամանակի ընթացքը վերականգնել:

Այսինքն, մի աշխարհում տեղի ունեցող գործողութիւնը դրանից մի կարգ ցածր (պատճառ հանդիսացող) աշխարհում ներկայացուած է համապատասխան խորհրդանշական-ծիսական գործողութեամբ:

Եւ, ի վերջոյ, նկատենք մի կարեւոր հանգամանք եւս:

Ինչպէս նախընթաց շարադրանքում տեսանք, տարածութիւնը եւ ժամանակը ունեն միանման կառուցուածք եւ միանման յատկանիշներ: Դրանք երկուսն էլ եռամաս են, երկուսն էլ տրոհւում են աստիճանաբար եւ ամէն աստիճանում տրոհումը լինում է միշտ մէկը երեքի բաժանուելով: Դրանց երկուսի մէջ էլ առկայ է պատճառական կապ աստիճանակարգուած մասերի տարբեր կարգերի միջեւ: Երկուսում էլ առկայ է կէտի (ակնթարթի, պահի, երկրի երեսին գտնուող ծակի, աղբիւրի ակի) եւ ամբողջի (յաւերժի, տարեշրջանի, այլ աշխարհի) հաւասարեցում-նոյնացումը: Երկուսում էլ առկայ է պատճառական կապ տարբեր աշխարհների իրադարձութիւնների միջեւ: Երկուսում էլ առկայ է այս պատճառական կապին զուգահեռ՝ հակառակ ուղղութեամբ յետադարձ կապ: Այսինքն, տեսնում ենք, որ թէ՛ իրենց կառուցուածքով, եւ թէ՛ իրենց յատկանիշներով տարածութիւնն ու ժամա-

նակը նոյնական են: Սա մտածել է տալիս, որ հնարաւոր է, տարածութեան եւ ժամանակի այս զարմանալի ընդհանրութիւնը հետեւանք լինի դրանց միջեւ աւելի սերտ առնչութեան, քան միայն նմանութիւնն է: Իսկ ի՞նչ աւելի սերտ առնչութիւն կարելի է պատկերացնել դրանց միջեւ:

Այս հարցի պատասխանը մեզ կարող է յուշել հայերէն լեզուի մէջ պահպանուած տեղեկոյթը Հայոց հնագոյն տարածա-ժամանակային ընկալման մասին:

Այսպէս, հայերէնում ունենք երկու բառ, որ միաժամանակ ունեն թէ՛ տարածական, եւ թէ՛ ժամանակային իմաստ: Առաջինը՝ «վայր» բառն է, որ նշանակում է տեղ, բացաստան, քնակութիւնից դուրս եղած տեղ, ու նաեւ՝ մի փոքր ժամանակ, անորոշ ժամանակ, ժամանակամիջոց, որից էլ՝ վայրկեան եւ վայրիկ - ժամանակի փոքրագոյն տեւողութիւն իմաստով<sup>24</sup>:

Միւսը «ատեան» բառն է, որ եւս ունի թէ՛ տարածական, եւ թէ՛ ժամանակային իմաստ. սրանից՝ ատեմ բառը զուտ ժամանակային իմաստով<sup>25</sup>: Այսինքն, ունենք երկու օրինակ, երբ միեւնոյն արմատական բառով արտայայտուած են թէ՛ տարածական, եւ թէ՛ ժամանակային իրողութիւններ:

Սա ուղղակիօրէն ցոյց է տալիս, որ հայերէն լեզուի նախնական ժամանակներում այդ լեզուով խօսողների համար այս երկու հասկացութիւնները պիտի իրար համընկնէին, լինէին նոյնական: Այսինքն, հնում պիտի եղած լինի տարածութեան եւ ժամանակի նոյնութեան պատկերացում:

Ստացւում է, որ ե՛ւ ըստ մեր քննարկած հէքեաթների նիւթի, ե՛ւ էլ ըստ հայերէնի մէջ պահպանուած լեզուական-արմատական իրողութիւնների, Հայոց հնագոյն տարածա-ժամանակային պատկերացումների մէջ պիտի եղած լինի տարածութեան եւ ժամանակի նոյնականութեան պատկերացում:

Փորձենք սա հասկանալ փոքր-ինչ աւելի մանրամասն: Գիտենք, որ մարդը տարածութիւնն ու ժամանակը ընկալում է յստակօրէն իրարից առանձին եւ տարբեր: Աւելին. մարդը տա-

24 Ա.ՃԱՌԵԱՆ, Հ., Հայերէն արմատական բառարան, հտ. Դ., Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան 1979, 300, եւ հտ. Ա., 1971, 286: Նաեւ՝ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Հայերէն բացատրական բառարան, հտ. IV, ՀՍՍՀ պետ. հրատ., Երեւան 1945, 295-298, եւ հտ. I, 1944, 249:

25 Նոյն:

րածութիւնն ու ժամանակը ընկալում է նաեւ ոչ միանման, ոչ միակերպ (մարդու ընկալած տարածական երեք չափումների դիմաց ժամանակային միայն մէկ չափում է ընկալւում, տարածութեան բոլոր ուղղութիւնների համարժէքութեան դիմաց ժամանակային «առանցքի» վրայ միայն մէկ՝ անցեալից դէպի ապագայ ուղղութիւնն է մարդուն մատչելի եւն.)։ Ուրեմն, ա՛յս առումով չի կարող նոյնականութիւն լինել տարածութեան եւ ժամանակի պատկերացումների միջեւ։ Իսկ ի՞նչ առումով կարող է լինել տարածութեան եւ ժամանակի նոյնականութեան պատկերացումը։

Տեղին է յիշել, որ ըստ մէր քննարկած հէքեաթների նիւթի, աշխարհը ստեղծուել է վիշապամարտի յաղթական աւարտով՝ պարտուած վիշապի մարմնի մասերից։ Իսկ այս ստեղծուած աշխարհը բաղկացած է երկու կէսերից՝ երկրից եւ երկնքից։ Եւ այս երկուսն էլ չափուում են միեւնոյն՝ երկարութեան միաւորներով՝ ասպարէզներով<sup>26</sup>։

Միւս կողմից էլ գիտենք, որ մեր հէքեաթներում ժամանակը ներկայացուած է իբրեւ թել, որ կծկում եւ արձակում է ժամանակի տէր, կամ պահպան, ծերունին՝ Ժուկ-ժամանակը<sup>27</sup>։ Իսկ թելն էլ, ինչպէս գիտենք, ունի միայն մէկ չափում, այն է՝ երկարութիւն<sup>28</sup>։ Այսինքն, ըստ այս պատկերացման, ժամանակը եւս պիտի չափուի երկարութեան միաւորներով։ Արդի բնագիտութեան լեզուով ասած՝ ըստ մեր հէքեաթների նիւթի տարածութիւնն ու ժամանակը երկուսն էլ ունեն միեւնոյն չափողականութիւնը։ Սա մեզ բերում է ժամանակի եւ տարածութեան հաւասարեցման-նոյնացման։

Ժամանակը, ըստ մեր քննարկած հէքեաթների, ընկալւում է իբրեւ տարածական աշխարհից դուրս, դրանից առանձին իրողութիւն։ Այսպէս հէքեաթներում տղան ժամանակին հանդիպում է ցամաքաթամիւն, կամ մի մեծ ծառի տակ։ Այս ճամբաբաժանը սկիզբն է երեք տարբեր ճանապարհների, որոնք, բնականաբար, տանում են դէպի երեք տարբեր աշխարհներ։ Այսինքն, սա մի «տեղ» է, որ դուրս է այդ երեք աշխարհներից։ Եթէ սա

26 ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., *Յովհաննէս Սարկաւազի Խառնախորանում առկայ օրացուցային որոշ մակաչափերի մասին*. Բ, ի էջմիածին, 2007, Ը., 65-76:

27 ՀԺՀ, հտ. 13, 1985, 150-151:

28 Իր այս յատկութեամբ՝ միայն մէկ չափում ունենալով, թելը լրիւ համադրելի է մարդու ընկալած միաչափ ժամանակին:

զուգադրենք աշխարհի եռամաս պատկերացման հետ, կը ստանանք, որ այս ժամանակը դուրս է երեք աշխարհներից, այսինքն՝ ընդհանրապէս՝ աշխարհից: Իսկ եթէ ի նկատի ունենանք ժամանակը մարմնաւորող ծերունու՝ մի մեծ ծառի տակ լինելը, սա պիտի ուղղակի աղերսուի կեանք ծառի հետ, որն էլ, ինչպէս գիտենք, Իրախտում է, այսինքն՝ դուրս է աշխարհից: Աւելին. այս ժամանակը նաեւ «նախորդում» է այն վիշապամարտին, որի արդիւնքը պիտի լինի կարգաւորուած Տիեզերքի ստեղծումը: Աւելին, այս ժողով-ժամանակը ինքը պատճառն է այն սովորական ժամանակի, որ ընթանում է մարդկանց աշխարհում: Այսինքն, որոշ իմաստով սա կարելի է անուանել «նախաժամանակ»: Ստացւում է, որ այս ճամբաբաժանի ծառի (կենաց ծառի) մօտ իրար հետ են նախաժամանակն ու տակաւին չտրոհուած աշխարհը: Այսինքն, սա այն նախագոյ վիճակն է, որից յետոյ պիտի յառաջանան թէ՛ տարածական աշխարհները, եւ թէ՛ ժամանակը:

Ստացւում է, որ ըստ մեր նիւթի արարչագործութեանը նախորդող վիճակում պիտի եղած լինի տարածութեան եւ ժամանակի միասնականութիւն-նոյնականութիւն:

Արդ, ամիոփելով կատարուած քննութիւնը, համառօտ տանք, այն հիմնական արդիւնքները, որ ստացուել են մեր կատարած այս վերլուծութիւնից:

Հայկական հրաշապատում հէքեթների եւ Սասնայ Մուրդիցապէտի մէջ արտայայտուած են տարածութեան եւ ժամանակի մասին Հայոց հնագոյն պատկերացումները, որոնց համաձայն՝

ա. Տարածութիւնը ունի եռամաս կառուցուածք.

բ. ժամանակը ունի եռամաս կառուցուածք.

գ. Տարածութեան եւ ժամանակի մասերն իրենք եւս ունեն եռամաս կառուցուածք.

դ. Թէ՛ տարածութեան, եւ թէ՛ ժամանակի տրոհումը միշտ լինում է միաւորը երեքի տրոհուելով.

ե. Շարժումը տարածական աշխարհներում միշտ միակողմանի է, որ այդ շարժման ժամանակային լինելու արտայայտութիւնն է.

զ. Տարածական աշխարհները դասաւորուած են ուղղաձիգ առանցքով վարից վեր.

Է. Ե՛լ տարածութեան, ե՛լ ժամանակի ընկալման մէջ առկայ է ամբողջի եւ դրա փոքրագոյն մասի համատեղում-նոյնացում-հաւասարեցում, այսինքն՝ ունենք եզակի կէտի եւ ամբողջի համապատասխանեցում.

ը. Առկայ է պատճառական կապ ստորին եւ վերին աշխարհների միջեւ. վերին աշխարհների իրադարձութիւնները յետեւանք են ստորին (պատճառական) աշխարհների իրադարձութիւնների.

թ. Կայ թոյլ արտայայտուած յետադարձ կապ վերին եւ ստորին աշխարհների իրադարձութիւնների միջեւ. վերին աշխարհների իրադարձութիւնների հետեւանքները թեթեւակի դրսեւորուում են ստորին (պատճառական) աշխարհներում.

ժ. Մի աշխարհի առարկան եւ իրադարձութիւնը (գործողութիւնը) դրա նախորդ կարգի աշխարհում արտայայտուած է ոչ թէ ուղղակիօրէն, այլ համապատասխան նշանակներով-խորհրդանշաններով.

ժա. Արարչագործութեանը նախորդող վիճակում պիտի եղած լինի տարածութեան եւ ժամանակի միասնականութիւն-նոյնականութիւն: "

//

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

### Summary

## THE UNDERSTANDING OF TIME AND SPACE ACCORDING TO ARMENIAN FAIRY TALES

GRIGOR BROUTIAN

The analyze of Armenian fairy tales and the epic Sasna Tsrer makes possible to restore some essential elements of understanding of time and space in ancient Armenia.

According to this analyze the space has three-part structure: it consists of three worlds – the Light world, the Magic world and the Dark world (Underground). The time also has three-part structure. The parts of time and space themselves consist of three parts each. The division of time and space is always done by dividing each unit into three parts. The movement in different worlds is always one-sided, which is the performance of time nature of this movement. The space worlds are arranged along the vertical axis from down to up. Both in the understanding of time and space we see identification of the whole and its smallest part, that is – we have correspondence of the single spot and the whole.

We see causal connection between the lower and upper worlds: the events of the upper worlds are consequences of the events in the lower (causal) worlds. There exists also low-grade feedback between the events of the upper and lower worlds: the events of the upperworlds are slightly reflected in the lower (causal) worlds. The objects and events (actions) of one world are represented in the lower (causal) world not directly, but by means of their corresponding symbols.

As a result of this analyze we find out also that according to the oldest Armenian belief there was unity and identity of time and space in the state of the Universe preceding the creation of the world.